[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
24	Հունվար	2019 թ.		Բ	6279396248
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
26	Դեկտեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Փոխադրագիտական եզրակացություն N 03551801

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	8	1	8	7	7	
[9] Անվանումը	«ԷՔՍՊԵՐՏ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)								
[10] Բանկային տվյալները	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ, ԲԱՆԿ ՓԲԸ ՇԵՆԳԱՎԻԹ Մ/Ճ	N 220098531571000							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 16/35								
[12] Լրացուցիչ տվյալներ									

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3	
[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[15] Բանկային տվյալները	ՖՆ աշխատակազմի Գործառնական Վարչություն	N 900011000834							
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								
[17] Լրացուցիչ տվյալներ									
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն								
	Լիազորագիր	Համար							
		Ամսաթիվ							

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ծավալը կամ ծառայության քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատաապրանքագիտական փորձաքննություն	հատ	1	90000	90000
Ընդամենը					90000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ BAGHDASARYAN ARAKSYA 5910870025

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

24/01/2019 16:32:17

ՈՐՈՇՈՒՄ
ԴԱՏԱԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11-ը դեկտեմբերի, 2018թ. ք. Էջմիածին

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Սամսոնյանս՝ ուսումնասիրելով վարույթումս քննվող թիվ **57179117** քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2017թ-ի նոյեմբերի 3-ին, ժամը 23:30-ից մինչև նոյեմբերի 4-ը ժամը 10:20-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը, Էջմիածին քաղաքի Չարենց թաղամասի 25 շենքի բակից գաղտնի հափշտակել է Աշոտ Աղվանի Դաշտոյանին պատկանող <<Վազ-2107>> մակնիշի 04 OL 007 հ/հ-ի ավտոմեքենան՝ պատճառելով խոշոր չափերի հասնող՝ 800.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 14.11.2017թ-ին ՀՀ Ոստիկանության Վաղարշապատի բարժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 57179117 քրեական գործը, նույն օրը որոշում է կայացվել քրեական գործն ըստ քննչական ենթակայության՝ Վաղարշապատի քննչական բաժին ուղարկելու մասին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում՝ 06.12.2017թ-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնից գրությամբ ստացվել են Երևան քաղաքի Նոր Խարբերդ Ձորի 3-րդ փողոցի 42 տան բնակիչ, 06.11.1993թ-ին ծնված Արսեն Հրաչյայի Մանուչարյանի վերաբերյալ նյութերը, համաձայն որոնց <<ավտոառևանգում>> կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել Արսեն Մանուչարյանը, ով խոստովանել է, որ Էջմիածին քաղաքից <<Վազ-2107>> մակնիշի 04 OL 007 հ/հ ի ավտոմեքենան ինքն է գողացել:

06.12.2017թ-ին Արսեն Հրաչյայի Մանուչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել՝ ստորագրություն չհեռանալու մասին և վերջինս ցուցմունք է տվել այն մասին, որ Էջմիածին քաղաքից <<Վազ-2107>> մակնիշի 04 OL 007 հ/հ-ի ավտոմեքենան ինքն է գողացել, տարել է իրենց տան ավտոտնակ և հենց առաջին օրը սկսել է մասնատել ու քանդել այն:

Իր կատարած առաջին ավտոմքենայի գողության դեպքից շուրջ 10 օր անց կատարել է հաջորդ մեքենայի գողությունը: Դա կատարել է Մեծամոր քաղաքից: Շենքերից մեկի բակից գողացել է մի <<ՎԱԶ 2106>> մակնիշի ավտոմեքենա: Դրանից բացի կատարել է նաև 2 ավտոմեքենայի գողություն Արմավիր քաղաքից՝ մեկ գիշերվա ընթացքում: Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցի շենքերից մեկի բակից<<ՎԱԶ-2106>> մակնիշի մեքենա է գողացել:

Նույն գիշեր Արմավիր քաղաքից գողացել է նաև <<ՎԱԶ-2107>> մակնիշի բեռնատար ավտոմքենա, որի վրայից քանդել ու հանել է գազի բալոնը, անիվները՝ անվահեծերով, հանել է նաև այդ մեքենայի մարտկոցը և առջևի լուսարձակները: Սրահից հանել է դրա մագնիտոֆոնը:

Գողացված <<ՎԱԶ-2106>>-ի մեջ է բեռնել բեռնատար 07-ի վրայից իր քանդած ու հանած մասերը և <<ՎԱԶ-2106>>-ով հեռացել է այդտեղից, քանի որ մյուս մեքենան իրեն այլևս հարկավոր չի եղել: <<ՎԱԶ-2106>>-ով գնացել է դեպի

Արմավիր-Երևան ավտոճանապար ու մեքենան վարել դեպի Երևան քաղաք: Ակնալիճ գյուղ չհասած թեքվել է դեպի աջ ու մտել դաշտերի տարածք, որտեղ կանգնեցրել է մեքենան ու սկսել արդեն այն քանդել, հանել է գազի բալոնը, անիվները՝ անվահեծերի հետ և այլ մասեր: Դրանից հետո դուրս է եկել դեպի գլխավոր ճանապարհ, պատահական տաքսի կանգնեցրել, որով գնացել է Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոց, որտեղ գտնվել է իր ավտոմեքենան: Իր մեքենայով վերադարձել է և այդ ամբողջ գողացածը բեռնել դրա մեջ և իր մեքենայով հեռացել: Գողոնը տարել է իրենց ավտոտնակ:

07.12.2017թ-ին Արսեն Հրաչյայի Մանուչարյանը լրացուցիչ ցուցմունք է տվել այն մասին, որ Էջմիածնից կատարված ավտոմեքենայի գողության հետ կապված նախկինում ամբողջ ճշմարտությունը ասած չի եղել՝ մասնավորապես, <<ՎԱԶ-2107>> մակնիշի 04 OL 007 համարանիշի ավտոմեքենայի գողության ժամանակ ինքը միայնակ չի եղել: Իր հետ եղել են եղբայրը՝ Արման Հրաչյայի Մանուչարյանը, ով այժմ այլ քրեական գործով կալանավորված է, ինչպես նաև իրենց ընկերներ Հրաչը և Էդգարը, ովքեր նույնպես եղբայրներ են: Նրանք ապրում են Նոր Խարբերդում՝ իրենց տան դիմացի թաղում, որին անվանում են <<Անուշ>> միավորում: Քանի որ իրեն է գումար հարկավոր եղել, ինքը նրանց երեքին, այդ թվում՝ եղբորը, խնդրել է, որ գան իրեն օգնեն ավտոմեքենան գողանալու հարցում: Նրանց ասել է, որ Էջմիածին քաղաքում հարմար ավտոմեքենա է տեսել <<ՎԱԶ-2107>> մակնիշի: Դեպքի օրը՝ ժամը 23:30-ից 24:00-ի սահմաններում, զանգահարել է Էդգարին, ով օգտագործում է 093-69-48-33 հեռախոսահամարը և ասել, որ եղբոր հետ տանից դուրս գա ու ինքն ու եղբայրը իրենց <<ՎԱԶ-2105>> մակնիշի ավտոմեքենայով գնացել են, նրանց վերցրել և այդ 4 հոգով գնացել գողությունը կատարելու: Մեքենան ինքն է վարել: Երբ հասել են Էջմիածին՝ իր տեսած <<ՎԱԶ-2107>> մակնիշի ավտոմեքենայի մոտ, մի քանի անգամ մեքենան վարել է դրա կողքով, համոզվել են, որ մարդ չկա ու մեքենան կանգնեցրել է <<ՎԱԶ-2107>>-ի կողքին, իջել է ղեկից՝ խնդրելով, որ իր հետ 2 հոգի իջնեն ու նայեն որ մարդ չգա, հանգիստ բացի դուռը և մեքենան գողանա: Եղբայրն ու Էդգարը իջել են մեքենայից և կանգնել խանութատիպ ինչ-որ շինության մոտ, որպեսզի հսկեն՝ մարդ չգա: Այդպես գողացել են նշված <<Վազ-2107>> մակնիշի 04 OL 007 հ/հ-ի ավտոմեքենան: Թե Մեծամորի և թե Արմավիր քաղաքի գողությունների ժամանակ ինքը եղել է միայնակ, որևէ այլ անձ իր հետ չի եղել: Էջմիածնից գողացած <<Վազ-2107>>-ի անվահեծերը և անվադողերը ոչ թե վաճառել, այլ պարտքի դիմաց տվել է Երևան քաղաքի 3-րդ գյուղի բնակիչ Բարիսին, ով օգտագործում է 094-899-122 հեռախոսահամարը: Նրան պարտք է եղել 80.000 ՀՀ դրամ ու դրա դիմաց նրան տվել է Էջմիածնից գողացած մեքենայի անիվները անվադողերով և գազի բալոնը: Այդ մեքենայի <<դինամոն>> տվել է իր ընկեր Հրաչին, ով հետը մասնակցել է գողությանը, պահեստային անիվը նույնպես Հրաչին է տվել, ձայնարկիչները տվել է իր մեկ այլ ընկերոջը՝ Գոնոյին, ով ապրում է իրենց փողոցում, նա օգտագործում է 077-78-77-00 հեռախոսահամարը: Վերջինիս հետ փոխանակում է կատարել՝ Էջմիածնից գողացած նշված մեքենայի 2 հատ ձայնարկիչը տվել է նրան, իսկ Գոնոն 4 հատ այլ ձայնարկիչներ է տվել դրանց փոխարեն:

08.12.2017թ-ին Արսեն Մանուչարյանի մասնակցությամբ կատարվել է քննչական փորձարարություն, որի ժամանակ նա մատնացույց է արել բոլոր վայրերը, որտեղից գաղտնի հափշտակել է ավտոմեքենաները:

12.12.2017թ.-ին Արսեն Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ եղբոր՝ Արման Հրաչյայի Մանուչարյանի և իրենց ընկերներ՝ Երևան քաղաքի Նոր Խարբերդ թաղամասի բնակիչներ, եղբայրներ ոմն Հրաչի ու Էդգարի հետ 2017թ. նոյեմբերի 3-ի լույս 4-ի գիշերը իր կողմից շահագործվող <<ՎԱԶ 2105>> մակնիշի ավտոմեքենայով գնացել է Էջմիածին քաղաք և վերջիններիս օժանդակությամբ Չարենց թաղամասի 25 շենքի բակից գաղտնի հափշտակել է Աշոտ Աղվանի Դաշտոյանի կողմից շահագործվող խոշոր չափի՝ շուրջ 800.000 ՀՀ դրամ արժողությամբ <<ՎԱԶ-2107>> մակնիշի 04 OL 007 հ/հ-ի ավտոմեքենան: Մասնավորապես, Արման Մանուչարյանը և ոմն Էդգարը կանգնել են ավտոմեքենայից քիչ հեռու և հսկել, որպեսզի որևէ մարդ երևալու դեպքում այդ մասին զգուշացնեն Արսեն Մանուչարյանին, իսկ ոմն Հրաչը նստել է <<ՎԱԶ 2105>> մակնիշի ավտոմեքենայի վարորդի նստատեղին և պատրաստ սպասել՝ անհրաժեշտության դեպքում այդտեղից իր նշված 3 հանցակիցներին արագ հեռացնելու համար: Նման պայմաններում Արսեն Մանուչարյանը քննությամբ չպարզված եղանակով բացել է <<ՎԱԶ 2107>> մակնիշի 04 OL 007 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդի դուռը, նստել մեքենայի մեջ և փականի էլեկտրալարերը միմյանց միացնելու միջոցով գործի գցել այն ու վարելով գաղտնի հափշտակել ավտոմեքենան, տարել Երևան քաղաքի Նոր Խարբերդ թաղամասի Ձորի 3-րդ փողոցի թիվ 42 տուն հասցեում գտնվող իրենց տան ավտոտնակ, որտեղ էլ մասնատել է ավտոմեքենան ու դրա պահեստամասերի մի մասը օգտագործել իր ավտոմեքենան նորոգելու համար:

Բացի այդ, 02.12.2017թ.-ին Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցի 27 շենքի 38 բնակարանի բնակիչ Հրանտ Մնացականի Համբարձումյանը ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 01.12.2017թ.-ին՝ ժամը 23-ից մինչև 02.12.2017թ. ժամը 08-ն ընկած հատվածում Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 27 շենքի բակից անհայտ անձը հափշտակել է իր <<ՎԱԶ 2106>> մակնիշի 35 AM 863 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ինչի արդյունքում իրեն պատճառվել է 900.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Այնուհետև լրացուցիչ բացատրությամբ Հրանտ Համբարձումյանը հայտնել է, որ Արսեն Հրաչյայի Մանուչարյանն իր ավտոմեքենան հափշտակելուց հետո ավտոմեքենայից գողացել է 300.000 ՀՀ դրամի իրեր, ինչպես նաև՝ ավտոմեքենայի հաշվառման վկայագիրն ու իր՝ ՀՀ քաղաքացու անձնագիրը և վարորդական իրավունքի վկայականը:

Դեպքի առթիվ 12.12.2017թ.-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, 183-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 48176817 քրեական գործը և նույն օրը ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչություն:

18.12.2017թ-ին որոշում է կայացվել թիվ 48176817 քրեական գործը թիվ 57179117 քրեական գործին միացնելու և նախաքննությունը մեկ վարույթում՝ թիվ 57179117 համարով շարունակելու մասին:

Նախաքննության ընթացքում Աշոտ Աղվանի Դաշտոյանը ճանաչվել է տուժող և հարցաքննվել, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ են տրվել ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնին, հարցաքննվել են վկաներ Արևիկ Հակոբյանը, Սերյոժա Ստեփանյանը,

Անահիտ Ղազարյանը, Անժելա Աբրահամյանը, Մարետա Մելիքյանը: Որոշում է կայացվել Արսեն Մանուչարյանի՝ Երևան քաղաքի Նոր Խարբերդ թաղամասի Ձորի 3-րդ փողոցի 42 տնից և դրա ավտոտնակից գողոնը առգրավելու վերաբերյալ, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնին: Գրություններ են ուղարկվել ՀՀ ոստիկանության Արմավիրի և Մեծամորի բաժիններ: Նախաքննության ընթացքում Հրանտ Մնացականի Համբարձումյանը նույնպես ճանաչվել է տուժող և հարցաքննվել: Որպես վկա հարցաքննվել է Գառնիկ Ավետիքի Նավասարդյանը:

11.12.2017թ.-ին ՀՀ ոստիկանության Մեծամորի բաժնից գրություն է ստացվել այն մասին, որ նյութեր են նախապատրաստվել 2017թ. նոյեմբերի 13-ի լույս 14-ի գիշերը Մեծամոր քաղաքի բնակիչ Դավիթ Լևոնի Գաբրիելյանին պատկանող «ՎԱԶ-2106» մակնիշի 34 ZF 172 համարանիշի ավտոմեքենայի գողության փաստով: Նույն օրը ձեռնարկված միջոցառումների արդյունքում ավտոմեքենան հայտնաբվերվել է Արարատի մարզի Հայանիստ գյուղի դաշտերում: 21.11.2017թ.-ին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ:

22.12.2017թ.-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնից ստացվել է ՔՀԲ-ի ավագ օ/լ Ա.Ավագյանի զեկուցագիրն այն մասին, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ Արսեն Մանուչարյանը Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 27 շենքի բակից առևանգել է Հրանտ Համբարձումյանին պատկանող «ՎԱԶ 2106» մակնիշի 35 AM 863 համարանիշի ավտոմեքենան և տարել Մեծամոր քաղաքի «Քոթեջներ» կոչվող թաղամասի վերջնամասում առկա աղբանոց ու այնտեղ թալանել:

25.12.2017թ.-ին գրություն է ուղարկվել ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին՝ պարզելու համար, թե Արման Մանուչարյանը նշված քննչական բաժնում քննվող քրեական գործերից որևէ մեկով մեղադրյալ հանդիսանում է, թե ոչ, եթե այո, ապա թույլատրել սույն քրեական գործով վարույթն իրականացնող քննիչին մուտք գործել համապատասխան քրեակատարողական հիմնարկ և Արման Մանուչարյանի մասնակցությամբ քննչական գործողություններ կատարել, որտեղից 22.01.2018թ-ին ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ ՀՀ ՔԿ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11120617 քրեական գործով Արման Հրաչյայի Մանուչարյանը /ծնված 06.11.1993թ./ ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ, միաժամանակ հայտնվել է նաև, որ վարույթն իրականցնող մարմինը չի առարկում, որ ՀՀ ՔԿ արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, Սպարտակ Պողոսյանը մուտք գործի ՀՀ ԱՆ ,,Նուբարաշեն,, ՔԿՀ և համապատասխան քննչական գործողություններ կատարի ՀՀ ՔԿ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11120617 քրեական գործով կալանավոր Արման Հրաչյայի Մանուչարյանի հետ:

27.12.2017թ.-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնից գրություն է ստացվել այն մասին, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ եղբայրներ Հրաչը և Էդգարը հանդիսանում են Հրաչյա Համլետի Խաչատրյանը և Էդգար Համլետի Խաչատրյանը, ովքեր բնակվում են Երևան քաղաքի 4-րդ փողոցի 4-րդ նրբանցքի 1 տանը: Ոմն Գոնոն հանդիսանում է 1980թ.-ին ծնված Գառնիկ Ավետիքի Նավասարդյանը, ով պարտավորվել է 2017թ. դեկտեմբերի 22-ին ներկայանալ հարցաքննության:

Ծանուցագրեր են ուղարկվել Հրաչյա Խաչատրյանին և Էդգար Խաչատրյանին որպես կասկածյալ հարցաքննության ներկայանալու համար: Բացի այդ, հանձնարարություն է տրվել ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնին, այդ թվում՝ Հրաչյա և Էդգար Խաչատրյաններին հայտնաբերելու և հարցաքննության ներկայացնելու համար, միջնորդություն է ներկայացվել դատարան՝ թույլատրելու ստանալ Արսեն Մանուչարյանի, Էդգար Խաչատրյանի, ոմն Բարիսի և Գառնիկ Նավասարդյանի հեռախոսահամարներիի մուտքային և ելքային զանգերի, SMS հաղորդագրություններիվերծանումները, հեռախոսահամարների աբոնենտային և զանգերն ու SMS հաղորդագրությունները սպասարկած կայանների տվյալները՝ 2017թ. հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար և ստացվել են վերծանումները:

Էդգար Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել հսկողությանը հանձնելը, վերջինս հարցաքննվել է որպես կասկածյալ:

Է.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Առաջադրված մեղադրանքում վերջինս իրեն մեղավոր չի ճանաչել, նշել է, որ գողության հետ որևէ կապ չունի:

Որոշում է կայացվել Հրաչյա Խաչատրյանին բերման ենթարկելու մասին, ստացվել է պատասխան այն մասին, որ վերջինիս հնարավոր չի եղել բերման ենթարկել:

26.09.2018թ.-ին Հրաչյա Համլետի Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել:

03.10.2018թ. թիվ 57179117 քրեական գործի նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է ինձ և կատարվում է նախաքննություն:

07.11.2018թ. ին Արման Մանուչարյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Ա.Մանուչարյանը հատարարել է, որ ցանկանում է ունենալ պաշտպան, սակայն չունի համապատասխան դրամական միջոցներ:

08.11.2018թ.-ին Արման Մանուչարյանը հրաժարվել է ցուցմունք տալ և ստորագրել որևէ փաստաթղթի տակ, սակայն բանավոր հատարարել է և խնդրել արձանագրել, որ ինքը որևէ գողություն չի կատարել, որևէ գողությունից տեղյակ չի և չգիտի, թե խոսքն ինչի մասին է, նաև հայտարարել է, որ սույն քրեական գործով ինքը ոչնչի չի ցանկանում ծանոթանալ, չի ստորագրելու որևէ փաստաթղթի տակ, ինչպես նաև չի ցանկանում առերես հարցաքննվել իր հարազատ եղբոր՝ Արսեն Մանուչարյանի հետ, քանի որ նույնպես հրաժարվելու է ինչ որ բան ասել և ստորագրել:

Արսեն Մանուչարյանը որպես մեղադրյալ լրացուցիչ ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը բոլոր գողությունները միայնակ է կատարել և սկզբնական ցուցմունքով նշած այն հանգամանքը, որ իր հետ նշված գողությունները կատարել են իր եղբայրը՝ Արման Հրաչիային Մանուչարյանը և սույն քրեական գործով մեղադրյալներ՝ Հրաչյա և Էդգար Խաչատրյանները, չի համապատասխանում իրականությանը:

Առերես հարցաքննվել են Արսեն Մանուչարյանը և Էդգար Խաչատրյանը, որի ընթացքում Ա.Մանուչարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը սուտ է ասել, որ Էդգար և Հրաչ Խաչատրյաններն իր հետ են եղել գողություն կատարելիս, նրանք

այդ գողություններից տեղյակ էլ չեն եղել և հետագայում էլ նրանց ոչինչ չի ասել: Ինքը չի գիտակցել, որ անձանց անուններ նշելով նրանց մեղադրում է հանցագործության մեջ, նշել է, որ նշված արարքն ինքը կատարել է անգիտակցաբար՝ վախից և հուզմունքից դրդված, քանի որ այդ օրերին իրեն իրեն անընդհատ բերման են ենթարկել ոստիկանության բաժին և ինքը գտնվել է հուզված ու հոգեպես ճնշված վիճակում, չի կողմնորոշվել և գիտակցել իր հետ տեղի ունեցողը, Էդգար և Հրաչ Խաչատրյանների անունները նշելով, թե իբր իր հետ են եղել գողություն կատարելիս՝ կարծել է, թե ավելի շուտ կվերջանա այդ ամենը, չգիտակցելով, որ նրանց մեղադրում է հանցագործության մեջ: Էդգար Խաչատրյանն առերես ցուցմունքով հայտնել է, որ իր հետ առերեսվող Ա.Մանուչարյանը ճիշտ է ասում, ինքը որևէ գողության հետ կապ չունի, որևէ գողություն չի կատարել և չգիտի խոսքն ինչ գողության մասին է:

Նկատի ունենալով, որ Հրանտ Մնացականի Համբարձումյանի <<ՎԱԶ 2106>> մակնիշի 35 ԱՄ 863 հաշվառման համարանիշի ավտոմեքենան գողանալու և դրա վրայից հանված ավտոմասերը գողանալու արդյունքում պատճառված գույքային վնասի չափերը պարզելու համար անհրաժեշտ են դատական ապրանքագիտության բնագավառի հատուկ գիտելիքներ և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 57179117 քրեական գործով նշանակել դատաապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ,,Էկսպերտ փորձագիտական կենտրոն,, ՍՊԸ-ի փորձագետներին:
2. Փորձագետի պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Հ.Համբարձումյանին պատկանող <<ՎԱԶ 2106>> մակնիշի 35 ԱՄ 863 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի ընդհանուր արժեքը դեպքի օրվա՝ 2017թ.-ի դեկտեմբերի 2-ի դրությամբ:

բ/ Հ.Համբարձումյանին պատկանող <<ՎԱԶ 2106>> մակնիշի 35 ԱՄ 863 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրայից հանված և գողացված ավտոմասերի և այլ առարկաների ընդհանուր շուկայական արժեքը դեպքի օրվա՝ 2017թ.-ի դեկտեմբերի 2-ի դրությամբ:

3. Փորձաքննություն կատարելու համար փորձագետին տրամադրել սույն որոշումը՝ 2 թերթ, իսկ Հ.Համբարձումյանին պատկանող <<ՎԱԶ 2106>> մակնիշի 35 ԱՄ 863 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և դրա վրայից գողացված բոլոր առարկաները գտնվում են ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի հատուկ պահպանվող տարածքում:
4. Հանձնարարել ՀՀ ,,Էկսպերտ փորձագիտական կենտրոն,, ՍՊԸ-ի տնօրենին պարզաբանել փորձագետին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-ր հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**